



Ֆրավապաշտպան կազմակերպությունների համագործակցություն Հայաստանի
 ԼԳԲՏ համայնքի իրավունքների պաշտպանության համար՝ ծրագիրն
 իրականացվում է ՏՆոր Սերունդ՝ Մարդասիրական ՀԿ-ի կողմից Բաց
 Հասարակության Ինստիտուտի հիմնադրամներ և Նիդերլանդների արտաքին
 գործերի նախարարության ֆինանսավորմամբ:



ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՈՒ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը՝ Նոր Սերունդ՝ Մարդասիրական ՀԿ-ն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին: Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ դրամաշնորհ N 18211:

Հիմնական հասկացություններ	3
Իրավապաշտպան կառույցների տեսակետը ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների վերաբերյալ. Սոցիոլոգիական հետազոտության ծրագիր	4
Հետազոտության նպատակը և խնդիրները	5
Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն և եզրակացություն 6	
ԼԳԲՏ անձանց բնութագրող հատկանիշներն ու տերմինները	7
ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ՀՀ-ում	9
ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման պատճառները և իրավունքների պաշտպանության խոչընդոտները ՀՀ-ում	11
Հասարակական Կազմակերպությունների դերը ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործում	13
Եզրակացություն	14
Առաջարկություններ	16

- ԼԳԲՏ Լեսբոսի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
- ՀՀ Հայաստանի Հանրապետություն
- ՀԿ Հասարակական Կազմակերպություն

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հիմնախնդրի նկարագիրը

Այսօր ՀՀ-ում ԼԳԲՏ անձիք ունեն քաղաքացիական կառույցներում թե՛ հասարակության մեջ, թե՛ իրավապաշտպան կառույցներում: Հասարակությունը դեռ ունի խնդիր նրանց՝ որպես լիիրավ և հավասար անդամ ընկալելու: Այնուամենայնիվ, առավել մեծ խնդրի առջև ենք կանգնում, երբ հարցը հասնում է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությանը: Արդյո՞ք ՀՀ-ում գործող իրավապաշտպան կառույցները կարող են և պատրաստակամ են օգնել, պաշտպանել ԼԳԲՏ անձանց:

Բաց Հասարակության Ինստիտուտի հիմնադրամների և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ, Տերոնեթ! Մարդասիրական ՀԿ-ն իրականացնում է ծրագիր՝ Ֆրավապաշտպան կազմակերպությունների համագործակցությունը Հայաստանի ԼԳԲՏ համայնքի իրավունքների պաշտպանության համար: Ծրագրի շրջանակներում կատարվել է սոցիոլոգիական հետազոտություն:

Տվյալ սոցիոլոգիական հետազոտության հիմնական նպատակն է պարզել ՀՀ-ում իրավապաշտպան կառույցների վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հիմնախնդրների նկատմամբ և այդ ոլորտում տվյալ կառույցների կողմից իրականացվող ծրագրերն ու գործողությունները:

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության մարզերում:

Սոցիոլոգիական հետազոտության գործիքն է հարցաթերթիկը, որն իր մեջ ներառում է ինը հարց:

Հետազոտության նպատակն է բացահայտել իրավապաշտպան կառույցների վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների նկատմամբ և այդ ոլորտում տվյալ կառույցների կողմից իրականացվող ծրագրերն ու գործողությունները:

Հետազոտության հիմնական նպատակից ելնելով առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Պարզել, թե ինչ հիմնախնդիրներ ունեն ԼԳԲՏ անձիք ՀՀ-ում՝ իրավապաշտպան կառույցների տեսանկյունից և որտեղից են այդ կառույցները տեղեկանում նրանց հիմնախնդիրների մասին:

- Բացահայտել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման պատճառները և նրանց իրավունքների պաշտպանության հիմնական խոչընդոտները:

- Բացահայտել արդյո՞ք իրավապաշտպան կառույցները առնչվել են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության խնդրի հետ և արդյո՞ք նրանք հասել են դրական արդյունքների:

- Պարզել այն ոլորտները, որտեղ հիմնականում խախտվում են ԼԳԲՏ անձանց իրավունքները:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական հետազոտությունն իրականացվել է ՀՀ մարզերում՝ մասնավորապես Լոռու, Շիրակի, Կոտայքի, Վայոց Ձորի, Արմավիրի և Տավուշի մարզերում:

Հետազոտությունը չի իրականացվել Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի, Արագածոտնի մարզերում, քանի որ այս մարզերում իրավապաշտպան կառույցները և վերջիններս ներկայացնող անձիք հրաժարվել են մասնակցել հարցմանը:

Հետազոտության մասնակիցները պատկանում են 20-50 տարիքային խմբին:

Հետազոտության մասնակիցների մեծամասնությունն իզական սեռի ներկայացուցիչ է (23-իզական, 7-արական):

Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչները ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների վերաբերյալ հիմնականում տեղեկանում են համացանցից:

Այսպես՝ հարցվողների մեծամասնությունը նշել է, որ տեղեկատվության հիմնական աղբյուրներն են՝

1. **համացանց - 24 պատասխան**
2. **սոցիալական ցանցեր - 14 պատասխան**
3. **հեռուստատեսություն - 11 պատասխան**
4. **աշխատավայր, ՀԿ - 8 պատասխան**
5. **ընկերներ, բարեկամներ, հարևաններ - 7 պատասխան**
6. **զրույցներ, լուրեր, բամբասանքներ - 6 պատասխան**
7. **թերթեր, տպագիր մամուլ - 6 պատասխան**
8. **ռադիո -1 պատասխան**

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրներին անդրադարձող հիմնական աղբյուրը համացանցը և սոցիալական ցանցերն են:

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Ընդհանուր առմամբ, եթե դիտարկենք վերաբերմունքն ըստ մարզերի, ապա կարելի է գալ հետևյալ եզրակացության՝

- Դրական վերաբերմունքը հիմնականում արտահայտված է Վայոց Ձորի մարզում: Այստեղ, համաձայն իրավապաշտպան անձանց կողմից ներկայացված կարծիքների, ակնհայտ է դրական և հանդուրժողական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

- Բացասական վերաբերմունք կարելի է նկատել Արմավիրի մարզում, այնուհետև Տավուշի մարզում, և հետո միայն Լոռու և Կոտայքի մարզերում:

- Չեզոք վերաբերմունքը հիմնականում առանձնացվում է որպես ամենաքիչ հանդիսացող տիպ:

Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում հավասարապես կարելի է նկատել չեզոք, անտարբեր վերաբերմունք ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների նկատմամբ, այնուհետև Արմավիրի մարզն է, որտեղ ևս նկատելի է անտարբերություն: Այն հարցին, թե իչպես են բնութագրում իրավապաշտպան անձիք ԼԳԲՏ անձանց, շատերը նշում էին.

«մարդ է: Իհարկե, դա շատ վատ է դիտվում սովորական կյանքով ապրող մարդկանց կողմից, սակայն պետք է ճիշտ ըմբռնել և հասկանալ նման անձանց»:

Ոմանք առանձնացնում են ԼԳԲՏ անձանց որպես համարձակ մարդիկ: Ոմանք էլ նշում են, որ առանձնահատուկ տերմիններ չեն կարող գտնել բնութագրելու համար: Համարում են, որ հասարակության լիիրավ անդամներ են և բոլորի նման օրենքի առջև հավասար անձ: Նրանք նույն ՀՀ քաղաքացիներն են ինչպես և մյուսները:

Որոշ իրավապաշտպանների կարծիքով ԼԳԲՏ անձիք մարդիկ են, ովքեր ունեն այլ կողմնորոշում, սակայն դա նույնպես բնական է:

Ոմանք գտնում են, որ ԼԳԲՏ անձիք ունեն անձնական դիրքորոշում սեփական սեռական կյանքի հանդեպ և քանի որ յուրաքանչյուր մարդ ունի իր անձնական իրավունքները, ապա կարիք չկա նրանց բնութագրել ոչ մի տերմինով կամ հատկանիշով: Որոշ հարցվողներ չցանկացան որևէ կերպ բնութագրել կամ հատկանշել, քանի որ գտնում են, որ ամեն մի մարդ իր կյանքն ունի: Իսկ շատերն էլ համարում են, որ ԼԳԲՏ անձիք սովորականից տարբեր անձիք են:

Հիմնական բացասական կարծիքներն արտահայտվում են «հիվանդ մարդ» տերմինով, կամ սովորական մարդիկ, բայց անսովոր հատկանիշներով: Ոմանք

համարում են, որ այս անձիք տարօրինակ են և նույնիսկ հնչեցին այնպիսի կարծիքներ, թե իբր ԼԳԲՏ անձիք այլախոհներ են , քանի որ տարբերվում են, առանձնահատուկ են:

Համաձայն նշված հատկանիշների՝ ԼԳԲՏ անձիք մեր հասարակության մեջ ընդունվում են ոչ միանշանակ, հիմնականում բացասաբար, որոշ դեպքերում էլ ընդհանրապես չեն ընկալվում:

Շատերը գտնում են, որ դա անցանկալի երևույթ է մեր հասարակության համար, բայց միևնույն ժամանակ՝ նրանք էլ ունեն իրենց իրավունքները:

Հետաքրքրական է այն փաստը, որ որոշ իրավապաշտպանների կարծիքով ԼԳԲՏ անձիք մարդիկ են, ովքեր կողմնորոշված չեն իրենց ով լինելու մեջ: Այնուամենայնիվ, նրանք շատերին նյութականով կարողանում են գրավել և ընդգրկել իրենց շարքերում: Եվ դա դիտվում է որպես հիվանդություն:

Գոյություն ունի կարծիք, որ ԼԳԲՏ անձիք ունեն հոգեբանական խնդիրներ, խոցելի խումբ են ներկայացնում կամ գուցե ի ծնե սեռական այլ կողմնորոշում ունեն: Նրանք անտեսված են, չընդունված, ունեն բազմաթիվ չլուծված խնդիրներ և մերժված են հասարակության կողմից:

ԼԳՖՏ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆՆԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բազմաթիվ հետազոտություններ արդեն փաստել են այն վարկածը, որ մեր հասարակությունում ԼԳՖՏ անձիք ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, սակայն կա անհրաժեշտություն հասկանալու և պարզելու, թե ինչ կարծիք են արտահայտում այս հարցի շուրջ իրավապաշտպան կառույցները, այն անձիք, ում կարիքը ամենից շատ է թերևս զգում ԼԳՖՏ համայնքը:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ իրավապաշտպան անձիք հենց իրենք էլ նշում են այն փաստը, որ ԼԳՖՏ անձանց իրավունքները ոտնահարվում են բոլոր ոլորտներում: Նրանք գտնում են, որ տվյալ անձիք հասարակությունից մեկուսացված են, ենթարկվում են պիտակավորման, արժանանում են հասարակության ոչ դրական վերաբերմունքին և նույնիսկ մերժված են հասարակության կողմից: Նրանք անընդմեջ առօրյայում հանդիպում են՝

- **խտրական վերաբերմունքի,**
- **իրավունքների ոտնահարման,**
- **հասարակության ոչ դրական կարծիքի,**
- **հասարակության կողմից ոչ ճիշտ ընկալման,**
- **իրենք՝ իրենց հիվանդի ընկալում,**
- **անհանդուրժողականություն,**
- **ենթարկվում են բռնության և խտրականության,**
- **ինտեգրվելու,**
- **անտեսված և արհամարհված են,**
- **չեն կարողանում օգտվել իրենց իրավունքներից, պետական հաստատություններից,**
- **հասարակության լիարժեք անդամ լինելու խնդիր:**

Այս բոլոր հիմնախնդիրների արդյունքում, հարցվողները գտնում են, որ ԼԳՖՏ անձիք ստիպված են քողարկվել, մեկուսանալ հասարակությունից, ինչը ևս հիմնախնդիր է վերջիններիս համար:

Որոշ հարցվողներ գտնում են, որ տվյալ անձիք Հայաստանում արհամարհված են և հասարակությունը նրանց հանդեպ լցված է ատելությամբ:

Բացի վերը նշված խնդիրներից, շատերը գտնում են, որ ԼԳԲՏ անձիք ունեն նաև հետևյալ հիմնախնդիրները՝

- **արտահայտվելու սահմանափակում**
- **շփման դժվարություն**
- **կայանալու և իրավապաշտպանության խնդիր, սակայն իրականում դա շատ բարդ է և անցանկալի**

Շատերը գտնում են, որ ԼԳԲՏ անձիք ունեն խնդիր նախ՝

- **իրենք իրենց ներսում**
- **հասարակության մեջ**
- **սեփական կյանքը դասավորելու հարցում**

Շատերն էլ համարում են, որ ճիշտ է՝ նրանք շատ խնդիրներ ունեն Հայաստանում, սակայն այդ խնդիրները միշտ էլ լինելու են, քանզի նմանատիպ մարդիկ հասարակության լիիրավ անդամ չեն կարող լինել: Լավ կլիներ, որ ամեն կերպ փորձեն բուժել նրանց:

Հարցվողներից երկուսն ասացին, որ իրենք տեղյակ չեն նմանատիպ մարդկանցից և երբևիցե չեն առնչվել նրանց հետ, չունեն բավականաչափ տեղեկատվություն նրանց իրավունքների խախտման հիմնախնդիրների վերաբերյալ:

**ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Հայ հասարակությունը մինչ այժմ պատրաստ չէ ընդունել ԼԳԲՏ անձին, որպես իր մի մասնիկ և լիարժեք անդամ: Այդ են վկայում նաև հետազոտության արդյունքները, համաձայն որի անգամ իրավապաշտպան կառույցները շեշտում են այդ փաստը:

Ըստ հետազոտության արդյունքների, մեր հանրապետությունում, հայ հասարակության մեջ գոյություն ունեն կարծրատիպեր, որոնք ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման պատճառ են հանդիսանում: Հասարակական կարծիքը, անհանդուրժողականությունը, հայկական ավանդույթները մեծապես ազդում և խոչընդոտում են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործընթացին:

Որոշ իրավապաշտպան անձիք համարում են, որ իրավունքների խախտման հիմնական պատճառ է հանդիսանում օրենքի չիմացությունը: Նրանք գտնում են, որ թե՛ ԼԳԲՏ անձը, և թե՛ իրավապաշտպան կառույցները չունեն բավականաչափ տեղեկատվություն ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ: Ե՛վ իրավապաշտպան կառույցների, և՛ պետության կողմից անուշադրության են մատնված նրանց իրավունքները պաշտպանող օրենքները:

Գոյություն ունի նաև ապատեղեկատվություն: Բազմաթիվ կառույցներ և անհատներ ունեն խեղաթյուրված պատկերացում ԼԳԲՏ անձի և նրա հիմնախնդիրների վերաբերյալ:

Բացի այն, որ հայ մտածողությունը թույլ չի տալիս ընդունել ԼԳԲՏ անձին որպես հասարակության լիարժեք անդամ, անգամ օրենքները թույլ են, կամ ոչ լիարժեք, կամ նույնիսկ իսպառ բացակայում են՝ նրանց շահերը պաշտպանելիս:

Որոշ հարցվողներ նշում են, որ ծանոթ չեն այս ոլորտին և օրենքներին, այդ պատճառով չեն առանձնացնում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտման պատճառներ:

Հարցվողներից մեկը նշել է, որ ըստ իրեն ԼԳԲՏ անձիք չունեն իրավունքներ:

Մեկ ուրիշի կարծիքով՝ մարդկանց բանական մարդ չլինելու ցանկությունն է պատճառը, որ խախտվում են տվյալ անձանց իրավունքները:

Որոշ հարցվողներ գտնում են, որ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության հիմնական խոչընդոտն այն է, որ նրանք չեն բարձրաձայնում իրենց փոքրամասնություն լինելու փաստը: Ոմանք գտնում են, որ ԼԳԲՏ անձիք հենց իրենք չեն դիմում իրենց իրավունքների պաշտպանության համար: Այդ է պատճառը, որ նրանք չեն ստանում

համապատասխան օգնություն: Այնուամենայնիվ, շատերը նշում են, որ իրավաբանական խորհրդատվություն տրամադրողների մոտ բացակայում է հանդուրժողականությունը: Բացի այդ շատ են հանրության ճնշումները, ինչը մեծ խոչընդոտ է հանդիսանում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության հարցում:

Հարցվողների մեծամասնությունը նշում է, որ մեր հասարակությունը դեռևս չի ընդունում կամ պատրաստ չէ ընդունել ԼԳԲՏ անձին: Մեր սովորույթները, ավանդույթները, սահմանափակ մտածելակերպը, անհանդուրժողականությունը, հասարակության կողմից խիստ բացասական վերաբերմունքը համայնքի նկատմամբ, և ի վերջո, համապատասխան իրավական ակտերի բացակայությունը հանգեցնում են նրանց իրավունքների ոտնահարմանը:

Ըստ հարցվողներից մեկի՝ ՀՀ - ում դեռևս չկան մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար կառույցներ:

Մեկ այլ իրավապաշտպանի կարծիքով էլ պատճառը քաղաքական կամքն է: Այսինքն, չկան համապատասխան մեխանիզմներ և դրանց ստեղծման համար ցանկություն, որոնք կպաշտպանեն ԼԳԲՏ անձանց իրավունքները:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Հետազոտության շրջանակներում փորձ է արվել պարզել, թե արդյո՞ք ԼԳԲՏ անձիք դիմում են իրավապաշտպան կառույցներ՝ մասնավորապես ՀԿ-ներին՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով: Բոլոր հարցվողները միանշանակ տվել են «ոչ» պատասխանը: Միայն մեկ կազմակերպության աշխատակից է տվել դրական պատասխան, սակայն թե ի՞նչ խնդիրներով է անձը դիմել իրենց ՀԿ և արդյո՞ք նրանք հասել են հաջողության, թե ոչ՝ հարցվողը չցանկացավ պատասխանել:

Այն հարցին, թե արդյո՞ք գործող հասարակական կազմակերպությունները պատրաստակամ են ներգրավվելու ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանության կոալիցիայի կազմում, հարցվողներից ստացվել է հավասար քանակությամբ «այո» և «չգիտեմ» պատասխանները: Նվազագույն պատասխանը եղել է «ոչ» տարբերակը:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ-ում իրավապաշտպան կառույցների վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց և նրանց հիմնախնդիրների նկատմամբ, կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը՝ նախ մեր հասարակությունում, մասնավորապես՝ իրավապաշտպան կառույցներում, լեսբուհի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր անձանց համարում են ի ծնե կամ ձեռքբերովի հիվանդություն ունեցող անձիք: Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիան դեռևս 1973 թվականին նույնասեռականությունը բացառել է հոգեկան հիվանդությունների շարքից, այնուհետև 1992 թվականին Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից վերջինս ջնջվել է հիվանդությունների շարքից, սակայն մեր հասարակությունն այս անձանց ընկալում է որպես հիվանդների:

Շատ իրավապաշտպան անձիք գտնում են, որ իրենք ունեն տեղեկատվության պակաս և գուցե խնդիրը հենց դրանում է, որ պատկերը խեղաթյուրված է և ոչ իրական:

Որոշ իրավապաշտպան կառույցներ դիտարկում են ԼԳԲՏ անձանց որպես խոցելի խումբ: Պատճառն այն է, որ այս անձիք ունեն բազմաթիվ խնդիրներ: Յուրաքանչյուր քայլափոխի նրանք առնչվում են իրավունքների ոտնահարման հիմնախնդրին, ենթարկվում են բռնության բազմաթիվ խմբերի կամ անհատների կողմից, մեկուսացված են հասարակությունից և անընդմեջ հանդիպում են խոչընդոտների թե՛ իրավական, թե՛ սոցիալ-տնտեսական դաշտում: Հաճախակի հետապնդումները և բռնության փորձերը թույլ չեն տալիս ԼԳԲՏ անձանց հանդես գալ որպես հասարակության լիիրավ անդամ:

Համաձայն իրավապաշտպանների կողմից ներկայացված կարծիքների՝ շատ հաճախ ԼԳԲՏ անձն ինքը չգիտի, թե որոնք են իր իրավունքները և ծանոթ չի այն իրավական ակտերին կամ օրենքներին, որոնք պաշտպանում են իր իրավունքները: Այդ պատճառով, նաև հասարակության կողմից գործադրվող ճնշման արդյունքում՝ ԼԳԲՏ անձիք խուսափում են դիմել որևէ իրավապաշտպան կառույցի:

Մյուս կողմից, հետազոտությունից պարզ դարձավ, որ շատ իրավապաշտպաններ իրենք ևս տեղեկացված չեն և չունեն հստակ պատկերացում օրենսդրական դաշտի և ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների վերաբերյալ: Հասարակական դիրքորոշումը և կարծրատիպերը նույնիսկ թույլ չեն տալիս իրավապաշտպան անձին ազատ գործել և պաշտպանել ցանկացած քաղաքացու հիմնարար իրավունքները: Շատ իրավապաշտպան անձիք նույնիսկ խուսափում են խոսել լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և

տրանսգենդեր անձանց վերաբերյալ, քանի որ դա հարիր չէ մեր ժողովրդին, մեր հասարակությանը:

Հետազոտությունից պարզ դարձավ նաև, որ հարցվողների մեծամասնությունը ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների մասին տեղեկանում է հիմնականում համացանցից կամ սոցիալական ցանցերից: Այստեղից ևս կարելի է եզրակացնել, որ ԼԳԲՏ անձանց և նրանց հիմնախնդիրների մասին խոսելը դեռևս, այսպես ասած, «հանցագործություն է» և հնարավորինս խուսափում են այդ մասին բարձրաձայնել: Այդ է վկայում նաև այն փաստը, որ հետազոտությանը համաձայնեցին մասնակցել Հայաստանի 10 մարզերից ընդամենը 6-ը:

Հարցվողներից շատերը գտնում են, որ ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտը լիարժեք չէ: Չկան համապատասխան մեխանիզմներ, որոնք կխթանեն ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը:

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ԼԳԲՏ անձիք իսկապես չեն դիմում համապատասխան կառույցներին կամ ուղղակի չունեն համոզմունք, որ դիմելու դեպքում կստանան աջակցություն և կպաշտպանեն նրանց իրավունքները:

Այդ պատճառով անհրաժեշտ է իրականացնել երկկողմանի աշխատանք թե՛ իրավապաշտպան կառույցների, և թե՛ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հետ:

Այսպիսով, հաշվի առնելով հետազոտության արդյունքները և եզրակացությունը, հանգում ենք այն մտքին, որ այսօր ՀՀ իրավապաշտպան կառույցներում գոյություն ունեն շատ «բացեր» և թերություններ: Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ, մասնավորապես՝

- բարձրացնել իրավապաշտպան կառույցների և իրավապահ անձանց տեղեկացվածության մակարդակը;
- սեմինարների, քննարկումների միջոցով տեղեկացնել իրավապաշտպան կառույցներին ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների, նրանց առանձնահատկությունների մասին;
- բարձրացնել ՁԼՄ-ների տեղեկացվածության մակարդակը համապատասխան աշխատանքային հանդիպումների և սեմինար-քննարկումների միջոցով;
- հստակեցնել ԼԳԲՏ անձանց առնչվող եզրույթները և ստեղծել ուղեցույց;
- ստեղծել ԼԳԲՏ հիմնախնդիրներով զբաղվող շահերի պաշտպանության իրավաբանական անձանց միավորում:
- մշակել ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված հստակ ռազմավարություն:
- իրավապահ կառույցներին ծանոթացնել ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանող օրենսդրական դաշտի հետ, որպեսզի յուրաքանչյուր իրավապաշտպան անձ և ՀԿ կարողանա պաշտպանել ԼԳԲՏ անձին:

Իրավապաշտպան կառույցները չպետք է ունենան խնդիր շահերի պաշտպանության հարցում: ԼԳԲՏ համայնքը ևս կարիք ունի աշխատանքների: Այստեղ անհրաժեշտ է սեմինարների, կրթական ծրագրերի միջոցով տեղեկացնել ԼԳԲՏ անձանց իրենց իրավունքների վերաբերյալ և ցույց տալ այն ուղիները և մեխանիզմները, որոնք խթանում են ԼԳԲՏ անձի իրավունքների պաշտպանությանը, օգնում են նրան ինքնահաստատվել մեր հասարակությունում և իրականացնել իր կենսագործունեությունը հասարակության բոլոր անդամների հետ հավասար մակարդակի վրա:



«Իրավապաշտպան կազմակերպությունների համագործակցություն Հայաստանի ԼԳԲՏ համայնքի իրավունքների պաշտպանության համար» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից: Բաց Հասարակության հիմնադրամներ և Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:



Հարցաթերթիկ

Այս հարցաթերթիկն անանուն է, ուստի խնդրում ,նք անկեղծորեն պատասխանել հարցաթերթում տեղ գտած հարցերին: Նախապես շնորհակալություն ,նք հայտնում տրամադրված ժամանակի և համագործակցության համար:

1. Ի՞նչ տերմիններով և հատկանիշներով կրնոթագրեթ ԼԳԲՏ անձանց:

2. ԹՎարկեթ, խնդրեմ, ի՞նչ հիմնախնդիրներ ունեն ԼԳԲՏ անձինք Հայաստանում:

3. Որտեղից եթ տեղեկանում ԼԳԲՏ հիմնախնդիրների մասին/նշեթ առավելագույնը երեթ 3 աղբյուր/:

- թերթեր, տպագիր մամուլ
- հեռուստատեսություն
- ռադիո
- ինտերնետային կայքեր
- սոցիալական ցանցեր (Facebook)
- աշխատավայր, ՀԿ
- ընկերներ, բարեկամներ, հարևաններ
- զրույցներ, լուրեր, բամբասանքներ
- Նույնասեռականներ
- ոչ մի տեղից
- Այլ_____

4. Ձեր կարծիքով, որո՞նք են ԼԳԲՏ իրավունքների խախտման պատճառները Հայաստանում: -

5. Որո՞նք են ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության հիմնական խոչընդոտները ՀՀ-ում:

6. Երբևէ ԼԳԲՏ անձինք դիմե՞լ են Ձեր ՀԿ:

- Այո
- Ոչ

7. Ձեր ՀԿ-ն պաշտպանե՞լ է ԼԳԲՏ անձի իրավունքներ:

- Այո
- Ոչ

8. Ու՞ր ոլորտում խախտված իրավունքներ էին և արդյո՞ք հաջողության հասել էք:

- եթե ոչ, ապա

ինչու _____

- եթե այո, ապա ինչպես:

9. Ձեր ՀԿ-ն կցանկանա ներգրավվել ԼԳԲՏ շահերի պաշտպանության կոալիցիայի կազմում:

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

Նշեք, ինչո՞րեմ, Ձեր ֆիզիոլոգիական սեռը

- Իգական
- Արական

Ձեր տարիքը _____

Շնորհակալություն